



ՃԵՄԱՐԱՆՑԻ

ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱՐՆԵՑԻ՝

I



աղաքական խոտվահուլդ պարագաներով, 1780 թ. հուլիսի 26-ին, 70 տարեկան հասակում Ս. Էջմիածնում վարձանվում է բազմաշխատ Սիմեոն Երեանցի՝ կաթողիկոս, և հաջորդ օրը, մեծ հանդիսավորությամբ, թաղվում Ս. Գայանեի վանքի արևմտյան գավթում: Մայր Աթոռի միաբանությունը նրա մահվան երրորդ օրը ժողով է գումարում, մասնակցությամբ հանգուցյալ կաթողիկոսի թաղմանը ներկա գտնվող Երեանցի և մոտակա այլ վայրերից նկատ աչքի ընկնող մեկիքների ու ազդեցիկ մարդկանց, նոր կաթողիկոս ընտրելու համար: Մինչև այդ, արդեն սովորություն էր դառած, որ միաբանությունն աշխարհական անձանց մասնակցությամբ մեկ կամ երկու թեկնածու էր ընտրում հայրապետական գահի համար, բայց վերջնական ընտրությունը վրայնում էր հեռավոր հայաշատ նշանավոր փնտրոնների հայությունից համաձայնության ստացումից հետո, այն է՝ Նոր-Ջուլայի, Թիֆլիսի և Կոստանդնուպոլսի հայությունից: Մասնավոր առհրաժեշտ էր Կոստանդնուպոլսի Պատրիարքարանի և նրա միջոցով տաճկահայոց համաձայնությունը, որովհետև հայ ժողովուրդի սովոր մեծամասնությունը ընկալում էր Արևմտյան Հայաստանում, իսկ Ամենայն Հայոց Ընդհանրական Կաթողիկոսի իշխանությունը արևմտահայերի կողմից ճանաչվելու և ընդունվելու համար կարիք կար նոր կաթողի-

կոսի ընտրության ժամանակ նրանց կարծիքն իմանալու ու ընտրելի նկատմամբ նրանց հավանությունը ստանալու:

Այսպես էր լինում քաղաքական, համամատարար, խաղաղ պայմաններում. բայց երբ Մայր Աթոռն ու շրջակայքը տառնապալից վիճակում էին գտնվում, երբ մոտակայքում ամենուրեք կոխվեք, արշավանքներ և ավերածություններ էին տեղի տնկնում, իսկ նման բաներ շատ հաճախ էին Մայր Աթոռի ու մերձակա հայ ժողովուրդի գլխով անցնում, այն ժամանակ ընդունված սովորությունը կրճատակամա անտես էր առնվում և նոր կաթողիկոսի ընտրությունը կայացվում էր միայն Մայր Աթոռի միաբանության անդամների և Երեանի ու շրջակա վայրերի աշխարհական ազդեցիկ անձանց մասնակցությամբ, ասանց իմացում տալու հեռավոր հայության հատվածներին և սպասելու նրանց հավանությանն ու համաձայնությանը: Այս ձևով ընտրվածը շուտափույթ կաթողիկոս էր օծվում, որից հետո Մայր Աթոռից գրություններ էին ուղարկվում նրանց՝ կատարված ընտրության ու օծման մասին, տեղեկացնելով և մանրամասն բացատրելով, թե ո՞րպիսի հանգամանքներ ստիպեցին ընտրությունը նեղ շրջանակներում կատարել. և, իհարկե, միշտ երկրի փոփոխություններ էր գլխավոր պատճառը, որը և հատուկ շեշտվում էր: Դրսի հայությունն էլ, սովորաբար, հաշտվում էր կատարված իրողության հետ և նոր փոփոխություն կաթողիկոս ճանաչում:

Նման խառնակ դրության մեջ էին գտնվում այդ ժամանակ պարսից իշխանության տակ հեծող Արարատյան Մայր Աթոռն ու հայությունը: Արդեն հոգեւոյս Սիմեոն կաթողիկոսի վերջին տարիներին շրջակա ավազակաբարո թյուրք ցեղապետները, օգտը-

1. Աղբյուրներ. — Օրմանյան, «Ազգապատում», — Լեո, «Հայոց պատմություն», երրորդ հատոր, — Շահաթեան, «Ստորագրություն», հատոր առաջին:

վելով նրա հիվանդագին ծանր վիճակից, սկսել էին նորից գլուխ բարձրացնել, նեղել հայ ժողովրդին, հափշտակել նրա անասուններն ու գույքը, նույնիսկ Մայր Աթոռի այգիներից երկուսը յուրացնելով և տավարի ու ոչխարի մի մասը խլելով, նաև մերձակա գյուղերին էլ ձեռք տալով և քանի փնով, այնքան ափելի հանդուգն ու լկտի էին դառնում: Այսպիսի աղմկահույզ ժամանակում հարկավոր էր շտապ գործել, կաթողիկոս ընտրել և Մայր Աթոռն ու հայ ժողովրդին անգլուխ շնորհել:

Դարերով ընդունված ու սրբազործված սովորություն էր, որ նոր կաթողիկոս ընտրելու ժամանակ ժողովականները միշտ առանձին հարգանքով են վերաբերվել վախճանվող կաթողիկոսի վերջին ցանկություններին հաջորդող անձի մասին: Էջմիածնեցիներին շատ լավ հայտնի էր Սիմեոն կաթողիկոսի վերջին փափագը, որ նա հայտնել էր իր խոստովանահորը, ծերունազարդ լուսարարապետ Մարկոս եպիսկոպոսին, այն է՝ «Աթոռը անայցելու շմնայ այս վնասաշատ ժամանակիս», և շտառով կաթողիկոս ընտրեն Ղուկաս Կարնեցի եպիսկոպոսին:

Ահա այս բոլորը նկատի առնելով, Ս. Էջմիածնում գումարված ժողովը կաթողիկոս է ընտրում Ղուկաս Կարնեցուն: Կարնեցին դժվարանում է իր համաձայնությունը տալ, աչքի առաջ ունենալով՝ երկրի ընդհանուր տաքանապալից դրությունը և, մանավանդ, երկյուղ կրելով, որ առանց Կոստանդնուպոլսի Պատրիարքարանի ու արևմտահայոց հավանության կատարված կաթողիկոսական ընտրությունը վարող է ներքին երկպառակությունների առիթ տալ, որից նա խոսափելով խոստովում էր: Բայց ժողովականները հորդորում են հագուստ ժողովրդի ու Մայր Աթոռի բարօրության, առկա դժնդակ պայմաններում, առանց դրաի հայության նախնական հավանության, այդ ծանր լուծը հանձն առնել: Կարնեցին զիջանելով, ստիպված, համաձայնում է:

II

Այստեղ մի քանի խոսք ասենք Կարնեցու անցյալի մասին:

Ղուկաս Կարնեցին ծնվել է 1722 թվին, Կարնի գավառի Քղի ավանում, բայց մեր պատմության մեջ նա, սովորաբար, կոչվում է քավառի անունով Կարնեցի: Մանկությունից ուսանում է Մայր Աթոռում Սիմեոն Երևանցու անմիջական հսկողության տակ և նրա ամենատաքաղեմ աշակերտների շարքը դասվում, նրան անվանում էին ճանդրա-

նիկ եւ շնորհածին գաւակ Սիմեոնի: 1751 թվին կուսակրոն քահանա է ձեռնադրվում լուսարարապետ Եղիազար եպիսկոպոսից, օծակից ունենալով Զաքարիա Կաղզվանցուն, որի մասին խոսք կլինի հետագայում:

1763 թվին Սիմեոն Երևանցին կաթողիկոսական գահը բարձրանալով, Կարնեցուն, սրա մատուցած բազմաթիվ ծառայությունների համար, այլև նրա գերազանց պարկեշտ վարքը նկատի ունենալով, եպիսկոպոս է ձեռնադրում:

Հաջորդ 1764 թվին Սիմեոն կաթողիկոսը Դոսկաս եպիսկոպոսին ուղարկում է Զմյուռնիայի առաջնորդության ու նվիրակության: Կարնեցին Զմյուռնիայում մնում է բավական երկար, մինչև 1775 թիվը: Բացի անմիջական իր թեմի ժողովրդի համար բազմօգուտ գործեր կատարելուց և կատարյալ խաղաղությամբ ու քաղցրությամբ իր ստանձնած պաշտոնը վարելուց, Կարնեցին Ս. Էջմիածնի Մայր Աթոռի համար զանազան հանձնարարություններ է կատարում և մանավանդ մեծ ծառայություն է մատուցում Ս. Էջմիածնում Սիմեոն կաթողիկոսի հիմնած տպարանի ու թղթի գործարանի համար անհրաժեշտ սարքեր և այլ պարագաներ հոգալու գործում, որովհետև ծովափնյա վայրում փոնվելով, Զմյուռնիայի պես վաճառաշահ հռչակավոր քաղաքում, մշտապես շրփման մեջ էր եվրոպացիների հետ, որոնցից և պետք է ստանար Ս. Էջմիածնի նորակառույց տպարանի ու թղթի գործարանի անհրաժեշտ սարքավորումը, ինչպես և վարձեր մասնագետ մաքրիկ:

Սիմեոն կաթողիկոսը 1775 թվին Ղուկաս Կարնեցուն կանչում է Ս. Էջմիածին, իբրև անմիջական, օգնական իրեն, մանավանդ որ ինքը՝ հայրապետն արդեն վատաստող վիճակի մեջ էր և կարիք ուներ մի բանիմաց ու հավատարիմ մարդու: Զմյուռնիացիք շատ են խնդրում Երևանցուն՝ Ղուկաս սրբազանին իրենցից չհեռացնել, բայց նա հիմնավոր առարկություններ է բերում, Կարնեցու ներկայությունը Մայր Աթոռում անհրաժեշտ համարելով:

Վերադառնալով Ս. Էջմիածին, Կարնեցին շարունակ թե ու թիկունք է լինում Երևանցուն և սրա հիվանդության շրջանում, որ բավական երկար տևեց, բարվոր կառավարում Մայր Աթոռի վարչական ու տնտեսական գործերը: Ահա այս բազմաշխատ ու մաքուր հոգեդրականին է Ս. Էջմիածնի ժողովը Սիմեոն Երևանցու հաջորդն ընտրում:

III

Սրանից հետո շտապ պատրաստություն են տեսնում նորընտիր հայրապետի սուրբ օծումը կատարելու, որը և տեղի է ունենում Սիմեոն Երևանցու մահվանից մի շաբաթ անց:

Այնուհետև, ընդունված սովորության համաձայն, Ղուկաս Կարնեցին, հայրապետական զահր բարձրանալով, պաշտոնական օրհնության գրություններ է ուղարկում հեռաբնակ հայերին, իր գահակալությունը հայտնելով և օրհնելով ու միխթարելով նրանց: Ամենից ավելի կարևոր էր Կոստանդնուպոլսի պատրիարքի ու ազդեցիկ ազգայինների սիրտը շահել, նրանց համաձայնությունը ստանալ:

Այս նպատակով պաշտոնական գրությունները Կոստանդնուպոլսի տանելու համար ընտրում են Պետրոս եպիսկոպոս Խոզարածյանին: Սա Ս. Էջմիածնից ուղևորվում է 1780 թվի օգոստոսի 17-ին և որոշ ժամանակից հետո հասնում Կոստանդնուպոլիս:

Երբ Կոստանդնուպոլսից իմանում են, որ առանց իրենց համաձայնության ու հավանության են նոր կաթողիկոս ընտրել, շատ են վշտանում, տեսնելով իրենց իրավունքը ոտնատակ եղած: Բայց աշխարհականներից ավելի է՝ վրդովվում ու դալբանում այդ ժամանակվա Կոստանդնուպոլսի պատրիարք Զաքարիան, որը, ինչպես հիշեցինք, կուսակրոն քահանա ձեռնադրվելիս, օծակից էր եղել Ղուկաս Կարնեցուն: Զաքարիան իրեն էր արժանալոր համարում Սիմեոն Երևանցու հաջորդը լինել և այդ պատճառով եռանդուն միջոցներ է ձեռք առնում Ղուկասի կաթողիկոսությունը ջնջելու համար, այսինքն սկսվում է այն ներքին խռովությունը, որից այնքան խուսափում էր նորընտիր հայրապետը դեռ իր ընտրության պահին:

IV

Թեպետ Կոստանդնուպոլսիցիների և Զաքարիա պատրիարքի բռնած հակառակության դիրքը մի ցավալի իրողություն է, բայց սրա վրա մի քիչ երկար կանգ ենք առնում, որովհետև այս ամբողջ անցուղարձի ժամանակ Ղուկաս կաթողիկոսի գործելակերպն այնքան խելացի և ուսանելի է, որ այժմ էլ ուղղակի հիացմունք է պատճառում հետնորդներին, թեպետ անագին ժամանակ է անցել այն օրվանից, մոտ 170 տարի:

Ստանալով Ս. Էջմիածնից ուղարկված պաշտոնական գրությունները, Զաքարիա պատրիարքը մեծամեծների ժողով է գումարում այդ խնդրով զբաղվելու համար: Որքան

էլ Պետրոս եպիսկոպոսն աշխատում է պոստեցիներին ու Զաքարիա պատրիարքին համաձայնության բերել, մանրամասն բացատրելով Մայր Աթոռի և Արարատյան երկրի տաղնապարհից դրությունը, երբ հնարավորություն չկար կաթողիկոսական ընտրությունը հետաձգել, բայց և այնպես Զաքարիա պատրիարքն ու ազդեցիկ ազգայինները դիմադրում են և որոշում՝ կայացնում՝ եղած ընտրությունը չճանաչել, նորընտիր կաթողիկոսի անունը եկեղեցիներում չհիշատակել:

Բացի այս, կաթողիկոսական ընտրության և ազդեցության խնդիրները հաստատուն մի ձևի վերածելու համար, չորս կետից բաղկացած պահանջներ են առաջադրում և առանձին գրությամբ պարտադրում Ս. Էջմիածնի միաբանությանն ընդունել նրանք: Այս նպատակով հատուկ մարդ են ընտրում, Կարապետ Ամդեցի՝ Տիգրանակերտի եպիսկոպոսին, որ իրենց պահանջների գրությունը Ս. Էջմիածին տանի ու միաբանությանն, ընդունել տա, այլև Կարնեցու ընտրությունը բեկանել տա:

Այս չորս կետերից առաջինն այն էր, որ ճեղքվածքները (այսինքն նորընտիր կաթողիկոսի կուսակիցները և Զաքարիայի հակառակորդները), որոնք ընտրություն էին հաստատել Վեհարանում, դուրս գան այնտեղից և միաբանաց սենյակները տեղափոխվեն: Մյուս երեքով պահանջում են, որ առանց ազգայինների հավանության կաթողիկոս չնստի, կաթողիկոսը խորհրդականներ ունենա և նրանց հավանությամբ գործի, Մայր Աթոռի հաշիվները ազգայինների ստուգմանը ենթարկվեն և, վերջապես, Մայր Աթոռի նախկինները Կոստանդնուպոլսի պատրիարքից տատան իրենց հրամաններն ու հրահանգները: Վերջը որոշում են, մինչև որ իրենց պահանջները չբավարարվեն, դիմադրությունը շարունակել: Եվ թեպետ Կոստանդնուպոլսի ազդեցիկ ազգայինների շրջանում կային բավական քառակուսյամբ անձինք, որոնք դեմ էին այս հակառակությանը և պատրաստ էին սիրով ընդունել Ղուկաս Կարնեցու կաթողիկոսությունը, բայց պատրիարքի ու մեծամասնության հանդեպ տածած երկյուղից, չէին համարձակվում իրենց ձայնը լսեցնել տալ:

V

Կոստանդնուպոլսիցիների պատվիրակ Կարապետ եպիսկոպոսը 1781 թվի մարտին հասնում է Ս. Էջմիածին և ներկայացնում պոսեցիների պահանջները: Միաբանությունը երկու ամիս ժողով է գումարում և նույն

ումսի վերջն իր պատասխանը պատրաստում: Ղուկաս Կարնեցին կոստանդնուպոլսեցիների պահանջների հետ ծանոթանալով և անձամբ Կարապետ եպիսկոպոսից էլ բացատրություններ լսելով, իսկույն որոշում է իր անձը չեզոքացնել և հրաժարվում է կաթողիկոսական արտաքին ձևականություններից: այդ օրվանից դադարում է նստել հայրապետական դահլի վրա, սրա կողքին մի փոքր աթոռ է դնել տալիս և նրա վրա նստում: Մինչև այդ, դեռ եպիսկոպոսական ձեռնադրություն չէր կատարած: այդ օրվանից էլ սկսած ամենևին չկատարեց: Բացի այս, կարգադրում է բոլոր թեմերում, վիճակներում շարունակել հեղեցիներին հիշատակել հանգուցյալ Միսեոն կաթողիկոսի անունը: Մինչև իսկ պատրաստ էր Կաթողիկոսարանից դուրս գալ և իր առաջվա միաբանական սենյակը քաշվել, եթե միաբաններն աղաչելիս չլինեին այդ քայլը չանել, որովհետև հայրապետի վեհարանում ապրելը որոշ չափով զսպում էր շրջակա ալլազգի իշխանավորներին և ավազակաբար թյուրք ցեղապետներին: Կարնեցին քացարձակ հայտարարում էր. «Ես ոչ եմ կաթողիկոս, այլ նույն Ղուկաս եպիսկոպոսն եմ, որպէս էի յառաջ: Երթալք ուրեմն միաբանությունամբ խորհեցարուք զծքոսուն Սրբոյ Աթոռոյս և և զոր ինչ դուք ամենեքեան պատշաճ տեսանիցէք, ինձ ևս հաճելի և ընդունելի է: Եթէ կամիցիք խնդրել զայլ տք յաղապս այսր աստիճանի, գրեցէք միաբանութեամբ եւ խնդրեցէք, ես ես կնքեցից զթողթն»: Անձնապես ահա ալոպիսի խելացի, խաղաղարար և հեղահամբույր գործելակերպով է պատասխանում Կարնեցին պոլսեցիների գրությամբ, գործելակերպ, որը միանգամայն պատիվ է բերում նրա վեհանախորդությանը: Գործելու այս կերպով նա չէր ուզում բարեացնել առանց այդ էլ ազգային խառնակ դրությունը և նորանոր անախորժությունների համար դուռ բանալ: Նրա համար համարն ազգի շահը, խաղաղությունն ու ապահովությունն ամեն բանից բարձր էին:

VI

Գարով էջմիածնեցիների պատրաստած պատասխան գրությամբ, պետք է ասել, որ դա կազմված է վերին աստիճանի տրամաբանորեն ու իրավաբանորեն: Այդ գրությամբ միաբանությունը պաշտպանում է Մայր Աթոռի ու նրա զարհուրելի դարերով սրբազորված իրավունքները: Պատվիրակ Կարապետ եպիսկոպոսի ներկայությամբ միաբանները հայտարարում են, թե «Այնպէս միանգամ ընտրեալ և կացուցեալ եմք (Ղու-

կաս), նոյնպէս եւ այժմ ընդունիմք, եւ ոչ է ի մեզ եւ այլ բան կամ պատասխանի»: Չորս պահանջներից առաջին առաջ տեղի տալով և բոլոր ներսնայիններին վեհարանից հանելով ու միաբանական սենյակներում տեղավորելով (ամենքն էլ իրենց լիակատար հոժար կամքով), դրանով միաբանությունն ընդառաջ է դնում Զաքարիա պատրիարքի ցանկությունը՝ իր հակառակորդներին՝ հակազդարարաններին ալլա շտեմնել վեհարանում, Ղուկաս կաթողիկոսի շուրջը լսեմով: Մնացած երեք պահանջների առթիվ բացարձակ հայտարարում են, թե «Կանոնադիրք Սրբոյ Աթոռոյս հայրապետը լինին եւ ոչ միաբանք, ամէն վարնոն հայրապետս մեր պարտի վերահաստատել իւրով կոնդակա եւ վարմիւր կնքով, եւ մեք զլուսանցան կընքեացուք. եթէ այս կանոնք առանց հայրապետական կնքոյ լինիցին, ի հարկէ անվաւեր լինին»: Հետևաբար, եթե կոստանդնուպոլսեցիք Ղուկաս Կարնեցու ընտրությունը չեն ընդունում, նրա «զօրհնութեան թուղթն չընթեւում, զանունն չլիշեն, և կաթողիկոս - անուան եւս արժանի չառնելով՝ ընտրեալք ձեր գրեն», էլ ի՞նչպես են պահանջում, որ կաթողիկոսական աթոռից կանոններ հաստատվեն, և հղրակացնում են, թե այս «անհեթեթ իմն է»: Թող միմյանց հետ համաձայնության գան, կացությունը պարզեն, կաթողիկոսի անունը հիշատակեն, «ապա եւ առացեալ կանոնքն հանդերձ այլ ես կանոնօք գրեսցին կոնդակա եւ կնքով»:

Այս բովանդակությամբ մի պաշտոնական դրություն կազմելով, էջմիածնեցիք այլ գրությունների հետ այն ուղարկում են վերոհիշյալ Պետրոս եպիսկոպոսին և այդ ժամանակ Կոստանդնուպոլսում գտնվող նվիրակներին, հորդորելով նրանց ամեն կերպ աշխատել պատրիարքին ու հակառակորդ ազգայիններին հաշտության և համաձայնության բերել: Միևնույն ժամանակ պատվիրակ երեք Կարապետ եպիսկոպոսն էլ վերադառնում է Կոստանդնուպոլիս: Էջմիածնեցիների ուղարկած թղթերը Կարինից արեւմտաքաղաքի ձեռքը, այնպես որ էջմիածնեցիք ստիպված են լինում նորից գրել և ուղարկել, որով էջմիածնեցիների պատասխանը, բնականաբար, բավական ուշանում է:

Ղուկաս Կարնեցին ինքն էլ իր կողմից գրություններ է ուղարկում Կոստանդնուպոլիս զանազան ազդեցիկ մարդկանց անունով, հորդորելով խաղաղությանը վերջ տալ ազգակործան երկպառակությանը: Մինչև իսկ նա առանձին նամակ է գրել նաև Զաքարիա պատրիարքին, հայտնելով, թե «Ի

հարկէ ժամանակինս վիճակեցայ ես յայն պաշտօն, այլ գիտեմ արժանագոյնիդ քան զիս տեղի տալ, միայն թէ հաճեցիս գալ այսր եւ զծանրագոյնս դայս յանձն առնուլ զլուծո, այսպիսով, բացարձակ հայտարարելով, թե ինքը պատրաստ է տեղի տալ ամէկի արժանավորագոյնի առաջ, միայն թե գրծութիւնը վերանայ:

VII

Այս գրութիւնները, ինչպէս և նվիրակ եպիսկոպոսներէ ու վերահիշյալ պատմիչական կարապետ եպիսկոպոսի բանավոր բացատրութիւնները, բավական բարեբար ազդեցութիւն են թողնում պոլսեցիներէ վրա, մասնաւորապէս ուժեղ տպավորութիւն է գործում Կարնեցու խոհեմ ու հեզ ընթացքը, որով նա բոլորովին ձեռք էր քաշել կաթողիկոսական արտաքին ձեռնամուխութիւններից և, կարծես, միայն որպէս տեղապահ էր պահում իրեն: Սակայն որքան զիջող էին պոլսեցի աշխարհականները, այնքան տանքի համառ էր իր դիմադրութեան մեջ Զաքարիա պատրիարքը: Այս տարտամ գրութիւնը շարունակվում է մինչև 1781 թվի դարունը, երբ անակնկալ մի դեպք իրերի ընթացքը բոլորովին փոխում է հօգուտ Ղուկաս Կարնեցու: Զաքարիա պատրիարքն այդ ժամանակ արեւմտահայերէին հոգող հայ-կաթողիկոսների նկատմամբ բռնած միանգամայն օրինական դիրքի համար շարժում է կաթողիկոսական պաշտպան Յրանսիայի և Ամատրիայի դեսպանների դայրույթը, որոնք տաճիկ կառավարութիւնից կտրակնապէս պահանջում են Զաքարիա պատրիարքին պաշտօնաւանկ անել: Սուլթանը ատիպիւս է լինում նրանց պահանջը կատարել, բայց կարգադրում է պատրիարքին պատվով ճանապարհ դնել Բրուսա, իսկ այնտեղի առաջնորդ Հովհաննէս Համադանցի եպիսկոպոսին բերել Կոստանդնուպոլիս ու պատրիարք կարգել: Այս դեպքը տեղի է ունենում 1781 թվի մայիսի վերջին:

Համադանցու առաջին գործը լինում է վերջ տալ Մայր Աթոռի նկատմամբ եղած նախկին դիմադրական դրութեանը: Այս ժամանակամիջոցում, Կարնեցու կողմնակիցների թիվը հետզհետե բավական շատացել էր և ազդեցիկ ազգայիններից ոչ ոք էլ դեմ չէր: Ինքը՝ Հովհաննէս պատրիարքն էլ համամիտ էր հաշտութեանը, այնպէս որ շուտով նոր պատրիարքի նախագահութեամբ Կոստանդնուպոլսում ժողով է գումարվում, որտեղ միաբերան ընդունում են Կարնեցու կաթողիկոսութիւնը, որով Ղուկաս Կարնեցու հոգեւոր իշխանութիւնը պաշտօնապէս ճանաչվում է բոլոր արեւմտահայերի վրա: Միայն այս բոլորից հետո Ղուկաս Կարնեցին

նորից բազմում է հայրապետական դահլ վրա, իբրեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս զանազան կողմեր կոնդակներ ու այլ պաշտօնական թղթեր ուղարկում, կաթողիկոսական բոլոր արտաքին ձեռքը բորձածում, եպիսկոպոսական ձեռնադրութիւններ կատարում և այլն: Ղուկաս Կարնեցու մեկուսանալն ու կաթողիկոսական արտաքին ձեռնամուխութեաներից ձեռքը քաշելը տևում է մոտ տասնամիս:

VIII

Ղուկաս Կարնեցու կաթողիկոսութիւնը տևում է մոտ քսան տարի (1780—1799 թ. թ.): Այդ ժամանակաշրջանում Անդրկովկասում մեծամեծ իրադարձութիւններ են տեղի ունենում:

Ամենից նշանավորն այս եղելութիւններից ռուսական զորքերի կարճատև թափանցումն էր Անդրկովկաս, որի մասին երկար խոսել ենք 1949 թվի «Էջմիածին» ամսագրի հունվար-փետրվար համարում տպւած Հովսեփ եպիսկոպոս Արղությանի մասին գրած հոդւածում: Ինչպէս հայտնի է, այդ գործում մեծ դեր են խաղացել Հովսեփ Արղությանն ու մեծանուն Հովհաննէս Էազարյանը: Խնդիրը վերաբերում էր Պարսկահայաստանի ազատագրութեանը ռուսական զինքի միջոցով, որը ռուսական արքունիքում առաջ էր քաշել մեծազոր իշխան Գրիգորի Պետրովիչին: Խնդրի հաջող բուժման համար Պետրովիչին անհրաժեշտ է համարում, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից էլ մի դիմում ուղղվի Եկատերինա կայսրուհուն: Ղուկաս Կաթողիկոսը, որը երկար տարիների ընթացքում անձամբ իր վրա էր զգացել պարսկական անարդ ու դառն լծի ամբողջ ծանրութիւնը, կատարում է նրա ցանկութիւնը և պահանջված դիմումն ուղարկում Պետերբուրգ, խնդրելով հայ ժողովրդին շուտափութ ազատել պարսկական լծից, բայց իր կողմից ոչ մի պարտականութիւն հանձն չի առնում երկրում ապստամբութիւններ առաջացնելու ուղղութեամբ: Նա մերթ տեսնում էր, որ կարծես ազատութեան ժամը մոտ է, մերթ էլ հուսալքվում էր, տեսնելով, որ գործնականապէս ոչ մի քայլ չէր առնվում, չնայած որ հայերի կողմից թե՛ մթերքներ են պատրաստվում և թե՛ զգալի թվով զինված ուժեր, ռուսական զորքերի Անդրկովկաս մտնելը դաւադրանքով համար: Այդ պատճառով էլ Կարնեցին շատ զգուշաւոր քաղաքականութեան է հետևում, անմիջական բռնաւորների ցատումն ավելի ևս չբորբոքելու համար: Այս մասին նա շատ պարզ հակացանցում է հնդկահայերին, որոնցից մեկը՝ Շահամիր Սուլթանյանը, առանձին գրութեամբ մի տեսակ կշտամբում է Կար-

նեցուն, թե երևի «հաճիք ընդ ծառայութիւնս
այլադեպաց եւ ոչ սիրէք զազատութիւնս»:
Կարենցին նրան գրած պատասխանի մեջ,
ի միջի այլոց, հայտնում է. «Բայց լինէր թէ
օրհնեալդ այժմ յայս կողմանս գայիր եւ
շրջագայէիր ի Զոտայու մինչեւ ցաստ եւ յայլ
կողմանս՝ յոր գոն ազգ մեր. եւ ականատես
վերահասութեամբ իմանայիր զկացողութիւնս
մերազնէից եւ զանօգնականութիւնս եւ զըրու-
նութիւնս իշխողացն. եւ ինքնին կնքէիր թէ՛
այս դիտմանցս յառաջանալ ոչ լինի. ապա
թէ հնարաւոր իցէ յառաջանալն, միթէ յի-
մա՞ր իցեմք, որ ի տառապանաց զերծանիլ
չկամիցիմք: Զկոնք որսացեալք ի ցանցս, եւ
թռչունք ըմբռնեալք ի վարմս, ջանան զեր-
ծանիլ, ապա ո՞րքան եւս առաւել բանա-
կանքս բաղձամք ազատութեանս. սակայն զի
այժմոյս կարի դժուարին է առ մեզ և վտան-
գաւոր յոյժ, վասն որոյ երկուց շարեաց
զփոքրն ընտրել պիտոյ է»:

IX

Հիրապի, շատ ու շատ դառն էր մի այսպի-
սի իրաւնաշփոթ ժամանակ Ամենայն Հայոց
Կաթողիկոս լինել և ժողովրդի դրութեան հա-
մար պատմութեան ատաշ պատասխանատու
համարվել: Այդ պատճառով, մենք ամբի ռ
ամբի պատկառանքով անք լցվում դեպի Կար-
ենցու անձնավորութիւնը, որը, ըստ ժողո-
ւրդրական աստօլածքի, աչք չունց արավ իր
կաթողիկոսութեան ընթացքում մի լավ օր
տեսնելու և միայն զարմանալ վարող ենք, որ
նա Մայր Աթոռի ներսում ընդարձակ գո-
ծունեութիւն ցուցաբերեց, որի մասին խոսք
կրինք քաղաքական արտաքին դժնարակ հան-
գամանքները համառոտակի շարադրելուց
հետո:

Կատարյալ անիշխանութիւն. էր տիրում
Պարսկահայաստանում, ճիշտ խորհնացու
ապածի պէս՝ «Այլ զարամբ ելանէր տիրել
աշխարհի»: Պարսկաստանի կենտրոնական
իշխանութիւնը վերացած էր: Ամեն մի գա-
ւառ, ամեն մի նահանգ կառավարվում էր իր
անկախան խանով կամ սարդարով: Սրանք
միմյանց դեմ շարունակ կռիւներ, նույնիսկ
պատերազմներ էին մղում իրենց կալված-
ներն ընդարձակելու համար. Հաղթողը ժա-
մանակավորապէս հզորանում էր. պարտվո-
ղը՝ տկարանում, մինչև որ նորից ոտքի ելնե-
լով, վրիժառութեան զգացմունքից դրբված,
կրկին հարձակվում էր հակառակորդի վրա և
կամ հաղթում կամ կրկին պարտվում, և
այսպէս շարունակ. և ո՞վ էր ամենից շատ

տուժում այս սարսափելի արհաւիրաց դրու-
թեան ժամանակ. — հայ ժողովուրդը, որը ոտի
տակ էր դնում, տորովում, կոտորվում կամ
լավադուրն դեպքում փախչում, գաղթում իր
դարավոր հայրենիքից. ժողովուրդը զրկվում
էր իր ունեցվածքից, իր անասունից ու ար-
յունքը տիրելով մշակված այգիներից: Հայո-
նի է, որ այս բոլոր ներքին պատերազմների
ու կռիւների ժամանակ, երկու հակառակորդ
կողմերին մթերքներ մատակարարողը հայ
ժողովուրդն էր, որն օրենքից դուրս էր դըր-
ված: Ամենացնենք, որ հենց ինքը՝ Մայր Ա-
թոռն էլ հաճախակի հավասարաշափ տուժում
էր այս արհաւիրքներից: Մի քանի օրինակ-
ներ բերենք քաղաքական անցքերից՝ մեր ա-
սածները հաստատելու համար:

Հայտնի է, որ Մայր Աթոռն անմիջականո-
րեն գտնվում էր Երեւանի սարդարի իշխա-
նութեան տակ և հեծում նրա բոլի անտա-
նելի լծի ներքո: Հազիվ էր մի քանի տարի
կարճատե խաղաղութիւն հաստատվել, որ
ահա նորից շփոթութիւն է ընկնում սարդա-
րի պալատում. պալատականները սպանում
են Ղուլամ-Ալի խանին ու հաջորդ նստեց-
նում նրա 12-ամյա եղբայր Մահմադ խա-
նին, որին կնուկյալ են տալիս Ուրմիա խա-
նի այլի կնոջը, սրան կարգելով խնամա-
կալուհի, հետք բերված մի ներքինու հետ
միասին: Բայց Մահմադի քեռին, Շափդին
աղան, քուրդ ցեղապետը, ցանկանում է
խնամակալութիւնն իր ձեռքը վերցնել և մի
նոր արքունահեղութիւն առաջացնել, բայց
Ղուկաս կաթողիկոսը միջամտում է, հան-
գրտացնում, հաշտեցնում և ցավալի դեպ-
քերի առաջն առնում:

Քիչ հետո, երկու բեկեր, Ալվազ ու Քասրմ,
որոնք Հյուսիսային սարդարի ժամանակ բարձ-
րաստիճան պաշտոններ ունեին, բայց
նրա հաջորդի ժամանակ դրանցից զրկվել,
նորից գրուխ են բարձրացնում և վստենակու-
թիւն առաջ բերում, մինչև որ սպանում են
Ուրմիայից եկած ներքինուն ու իրենց նախ-
կին պաշտոնները գրավում: Թեպէս այս-
տեղ, Երևանում, ժամանակավորապէս կար-
ճատե հանգստութիւն է հաստատվում, բայց
Հայաստանի հյուսիս-արեւմուտքում այս
նույն ժամանակաշրջանում կռիւներ ու պա-
տերազմներ են տեղի ունենում վրաց Հերակլ
թափալտի, իսաղտյաց գավառի պետ Ում-
ման խանի և օսմանյան սահմանակից կու-
սակալի միջև. և երկու տարի, 1785 և 1786
թվերին, Հայաստանի այս մասի ժողովուրդը
ոտի տակ է տրվում:

Հաջորդ 1787 թվին պատերազմ է ծագում

վրաց Հերակլ թագավորի ու Գանձակի խան Իբրահիմի միջև։ Առկախ մնացած պատեհ-
րազմը նորոգվում է հաջորդ 1788 թվին, տե-
վում երեք ամսի շափ։ Հերակլը Գանձակը
չի կարողանում վերցնել, բայց երկիրն ավե-
րում է ու դերիններ և ավար տանում հետը։

Նույն միջոցին Երևանի Մահմադ խանը
կռվի է բռնվում հիշատակված Իբրահիմի
հետ, նրանից խլում Հին-Նախիջևան քաղաքը
և միացնում իր տիրապետությանը։ Նույն
Մահմադ խանը դուրս է գալիս Բայազետի
տաճիկ կուսակալի դեմ, որն իր զորքով
Բաղրևանդից իջել էր Արարատյան դաշտ,
մինչև Երասխ գետի ափերը։ Մահմադը
հաջողությամբ քշում է նրան, ինքն էլ մըտ-
նում Ալաշկերտի դաշտը և մի քանի հայկա-
կան գյուղեր բռնորոշին ավերելով, վերա-
դառնում է Երևան։

Ահա այսպես, այս մի քանի տարվա ըն-
թացքում հայ ժողովուրդն աննկարագրելի
նեղություններ ու տառապանքներ է քաշում
իր բնիկ հայրենիքում իշխող մահմեդական
բոլոր բռնակալների ձեռքից։

Դրությունն ավելի է վատանում 1790 թվին,
Երևանի Մահմադ խանը վախենալով, որ
տաճիկների կողմից կարող է իրեն վտանգ
հասնել, վաղորդ իր ամբողջ հարստությունն
ու թանկագին զարդերն ուղարկում է խոյ,
ի պահ արևտեղի Հյուսեյին խանին. բայց
երբ կարծեցյալ վտանգը չի երևում, իր ու-
ղարկած գանձերը հետ է պահանջում, սա-
կայն մերժում ստանում։ Մահմադը զայրա-
նալով, դիմում է Հյուսեյին խանի վրա և իր
սեփականությունը պատերազմով հետ առ-
նում, այլև Հյուսեյին խանի եղբայր Զա-
ֆարդուլի խանին իբրև պատանդ իր հետ
բերում։ Մի քիչ անց, Մահմադը հավատա-
ցած լինելով, որ խոյի խանի հետ ունեցած
հին բարեկամությունը վերահաստատված է,
պատանդ Զաֆարդուլի խանին ազատ է ար-
ձակում։ Վերջինս պատանդ եղած ժամանակ
ծանոթանում է Մահմադի ձեռքի տակ
գտնված զինվորական ուժի հետ և այն շա-
փազանց թույլ համարելով, 1790 թվի գար-
նանը Հյուսեյինի հետ խոյից շարժվում է և
ուղղակի Երևանի վրա դիմում։ Մահմադը
երկյուղից փակվում է Երևանի բերդի մեջ,
խսկ իր ստորադրյալ իշխանավորներն էլ այս
ու այն կողմ են ամրանում։ Մայր Աթոռն էլ
իբրև ամրոց, շրջապատված լինելով բազ-
մաշխատ Սիմեոն կաթողիկոսի կառուցած

հաստահեղույս պարիսպներով ու աշտա-
րակներով, ապաստարան է դառնում մահ-
մեդական խանի ճաղանճ զինվորականների
համար, որոնք ավելի շուտ վանքի կողոպու-
տով և թալանով են զբաղվում, քան նրա
պաշտպանությամբ։

Երկու խաների Երևանին ու Ս. Էջմիած-
նին մոտենալու տագնապի մեջ է գցում Ղու-
կաս Կարնեցուն։ Բացի քաշած նյութական
անթիվ նեղություններից, նա դժգոհություն
թափում մեջ է ընկնում իր բռնելիք դիրքի հա-
մար։ Մայր Աթոռն անմիջականորեն ենթարկ-
վում էր Երևանի խանին՝ սարդարին.
ոստի Մահմադ խանը, իբրև անմիջական
իշխանավոր, բերդից հրահանգներ է ուղար-
կում Ղուկաս կաթողիկոսին, որ չլինի, թե
որքե՞ն կերպով օգնություն ցույց տա իր
թշնամի Հյուսեյին և Զաֆարդուլի եղբայր-
ներին։ Մյուս կողմից այս վերջիններք հայտ-
նում են կաթողիկոսին, թե իրենք միշտ
սեր են տածել դեպի Ղուկաս Կարնեցին և
հրավիրում են նրան տեսակցության, չնայած
որ հենց այդ օրերին Նորադավթից մինչև
Փարաքար գալով, իրենց հանդիպած բոլոր
հայ գյուղերը հրո ճարակ են դարձրած լի-
նում, Ս. Էջմիածնի շրջակա կուսանաց երեք
վանքերն էլ խալած կողոպտած ու Մայր Ա-
թոռի անասուններից ևս բազմաթիվ տավար
և ոչխար քշած-տարած։ Կարնեցին նրանց
պատասխանում է, թե «Սէր մեր ընդ ձեզ
հաստատում է», բայց հրաժարվում է տե-
սակցության գնալ, պատճառաբանելով, թե
«Մշիմանություն ամբողջս չէ քի ձեռն մեր»։
Այսպիսի կրիտիկական րուպին կարծես
հրաշքի նման մի բան է պատահում։ Ինչ-ինչ
պատճառներից դրված, արշավանքի եկած
խաները վերադառնում են խոյ, մեծամեծ
մնասներ պատճառած լինելով հայ բնակչու-
թյանն ու Մայր Աթոռին, ոչ միայն թի թշնա-
մեաց անտի, այլ և երկրացի առաջակա-
սարաս արիկալիցնա։ Նրանց հեռանալուց
հետո, Երևանի Մահմադ խանը նորից ար-
շավում է Նախիջևանի վրա, ասպատակի
մատնելով ճանապարհին հանդիպած բոլոր
հայ գյուղերը։ Այս ժամանակաշրջանի
մասին է, որ Կարնեցին գրում է, թե «Բա-
ղում վանդուրայք եւ եկեղեցիք կողոպտեցան
եւ աւերեցան, եւ մատնուրն նոցին գերեցեալ
ցիր եւ ցան. եղին եւ որք մնացեալք են,
այնոքիկ եւս օր աւուր կողոպտին եւ ոտնա-
կոխ լինին»։

(Շարունակելի)